ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1141 - Լ

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՇԽԱ-ՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի 252-Լ որոշման հավելվածի 161-րդ կետը՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 252-Լ որոշման հավելվածի 159-րդ կետով սահմանված ռազմավարությունների մշակման աշխատանքների համակարգման և կատարողականի քննարկման 6 աշխատանքային խմբեր (այսուհետ՝ աշխատանքային խմբեր) և՝

1) հաստատել ռազմավարությունների մշակման աշխատանքների համակարգման և կատարողականի քննարկման աշխատանքային խմբերի կազմը՝ համաձայն սույն որոշման N 1 հավելվածի.

2) հաստատել ռազմավարությունների մշակման աշխատանքների համակարգման և կատարողականի քննարկման աշխատանքային խմբերի աշխատակարգը՝ համաձայն սույն որոշման N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

10.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ